



**ԴԱՐՁԵ՛Ք ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՆՈՐԱՐԱԿԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ MIX-Ի ՄԱՍ**

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ


E-FIX-ը եռամյա ծրագիր է, որը ֆինանսավորվում է EU Horizon 2020 ծրագրի հովանավորությամբ: Կոնսորցիումը ներառում է ֆինանսավորման և էներգետիկայի ոլորտներում փորձագետ 14 գործընկեր Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի (Ավստրիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Լեհաստան) և Կովկասի (Հայաստան, Վրաստան) վեց երկրից: Ելնելով էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերում ունեցած մեր բազմամյա փորձից՝ նկատեցինք, որ և՛ էներգետիկայի հնարավոր ծրագրեր մշակողները և՛ ֆինանսավորողներն ունեն խնդիրներ՝ կապված էներգետիկայի ծրագրերի իրագործելիության և ներդրումների անվտանգության ապահովման ճշգրիտ գնահատման հետ:

Մեր նպատակն է E-FIX ծրագրի միջոցով խթանել մասնավոր ներդրումները՝ կիրառելով էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի համար ֆինանսավորման նորարարական մեխանիզմների շարքը՝ **էներգաարդյունավետության բարձրացման պայմանագրերի** համար վարկային գծեր, **քրաուդֆանդինգի** և **լիզինգի** մոդելներ:

ՄԵՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Մենք ցանկանում ենք հասնել մեր նպատակին՝

- **Վերլուծելով, համակարգելով և մշակելով ֆինանսավորման նորարարական մեխանիզմներ**՝ պայմանավորված գործընկեր երկրներում հայտնաբերված ֆինանսական ռեսուրսների անբավարարությամբ,
- **Գիտելիքների փոխանակում** գործընկերների և տեղի հիմնական շահառուներ միջև՝ կազմակերպելով ֆինանսավորման նորարարական մեխանիզմների մշակման վերաբերյալ վարպետության դասեր և վերապատրաստումներ,
- **Մշակելով ռազմավարության Ազգային գործողությունների ծրագրեր և միջկառավարական ուղեցույցներ**՝ 6 երկրում և Եվրոպական մակարդակով ֆինանսավորման մեխանիզմների կայուն ներդրման համար,
- **Ստեղծելով էներգաարդյունավետության փորձագիտական խորհրդատվական կենտրոններ գործընկեր** 6 երկրում՝ գործելով որպես կապի միջոց՝ հիմնական գործառույթների, էներգետիկայի ծրագրերի մշակողների և էներգետիկայի ֆինանսավորման համապատասխան մեխանիզմներ փնտրող պոտենցիալ ներդրողների համար:
- **Իրականացնելով ֆինանսավորման պիլոտային արշավներ**, որոնք արտահայտում են E-FIX-ի մեթոդաբանությունը իրական միջավայրում:



E-FIX-Ի ԱՎԿԱՎԿՈՂ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

E-FIX ծրագրի արդյունքում կընդլայնվի կայուն էներգետիկայի ծրագրերում մասնավոր ներդրումների ծավալը գործընկեր երկրներում: Ցանկանում ենք խթանել 8.5 միլիոն € ներդրումներ, որոնք նախաձեռնվել են E-FIX ֆինանսավորման պիլոտային արշավների ընթացքում, նաև կկատարվեն շուրջ € 48 միլիոն ներդրումներ ծրագրից դուրս՝ արտադրված 19.0 ԳՎԺ/տ էներգախնայողության մեջ և վերականգնվող ռեսուրսներից արտադրված հավելյալ 16.0 ԳՎԺ/տ էներգիայով: Մենք նաև նպատակ ունենք ծրագրի շահառուներին տալ գիտելիքներ, անցկացնել վերապատրաստումներ և տրամադրել գործիքներ, որոնք թույլ կտան հանդես գալ որպես E-FIX դեսպաններ – բազմապատկողներ, որոնք խթանում և իրականացնում են E-FIX մոտեցումը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ (INNOVATIVE ENERGY FINANCING MIX) ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԿԱ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԳՏՆԵԼՈՒ և ԱՎԵԼԻ ՇԱՏ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

Դարձե՛ք մեր նախաձեռնության մաս՝

- **Մասնակցե՛ք կազմակերպված դասընթացներին**
Դասընթացների ընթացքում կներկայացվեն ֆինանսավորման տարբեր մոտեցումներ, ինչպես նաև մասնակիցները ձեռք կբերեն էներգետիկ ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ: Առանձնահատուկ ուշադրություն կհատկացվի ֆինանսավորման նորարարական մեխանիզմներին (էներգաարդյունավետության բարձրացման պայմանագրեր, քրաուդֆանդինգ կամ լիզինգ)՝ հաշվի առնելով, որ վերջիններս ամենաառաջնայինն են համապատասխան տարածաշրջանային համատեքստում:
- **Ուսումնասիրե՛ք E-FIX գործիքակազմը**
Գործիքակազմը հատկապես օգտակար կլինի այն շահառուներին համար, որոնք արդեն սահմանել են իրենց տարածաշրջանում ներդրումների պահանջը: Այս գործիքակազմը հնարավորություն է տալիս գնահատել էներգետիկ ծրագրերի ֆինանսական իրագործելիությունը, գնահատել տեխնիկական և ֆինանսական խոչընդոտները տեղի համատեքստում և համապատասխանեցնել էներգետիկ ծրագրերի ներդրումները ֆինանսավորման նորարարական հնարավորությունների հետ:
- **Մասնակցե՛ք մեր արշավներին**
Մեր ֆինանսավորող գործընկերների հետ համատեղ կարող եք քննարկել և համաձայնեցնել ֆինանսավորման պիլոտային արշավների իրականացումը
- **Ստացե՛ք մեր փորձառու կոնսորցիումի աջակցությունը**
Մեր կոնսորցիումի կազմում են ֆինանսավորման նորարարական մեխանիզմների տեխնիկական և ֆինանսական փորձագետներ 6 երկրից: Պատրաստ ենք ուղղորդել Ձեզ աշխատանքների ընթացքում

Դարձե՛ք E-FIX դեսպան

Մեր գործընկերներն են

- ConPlusUltra GmbH (Ավստրիա) www.conplusultra.com
- Caucasus University (Վրաստան) www.cu.edu.ge
- Vienna University of Economics and Business (Ավստրիա) www.wu.ac.at
- CONDA AG (Ավստրիա) www.conda.at
- Mazovian Energy Agency (Լեհաստան) www.mae.com.pl
- South Bohemian Agency for Support to Innovation (Չեխիայի Հանրապետություն) www.jaip.eu
- Ekoport (Չեխիայի Հանրապետություն) www.ekoport.cz
- Zagreb Innovation Centre (Խորվաթիա) <https://www.zicer.hr/>
- Regional Energy Agency of Northwestern Croatia (Խորվաթիա) www.regea.org
- Caucasus Consulting Group Armenia (Հայաստան) www.caucasusconsulting.org
- ACBA Leasing Credit Organization (Հայաստան) www.acba.am
- Energy Investment Consultants (Վրաստան) www.eic.ge
- Georgian Leasing Company (Վրաստան) www.leasing.ge
- Ipopema Financial Advisory (Լեհաստան) www.ipopema.pl





ԿԱՊԻՏԱԼ ԵՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

CONPLUSULTRA GMBH

ԱՆԴՐԵԱՍ ԿԱՐՆԵՐ

ANDREAS.KARNER@CONPLUSULTRA.COM

WWW.ENERGYFINANCING.EU



This project has received funding from the European Union's Horizon 2020 research and innovation programme under grant agreement No 785081. Disclaimer: The content of this material does not reflect the official opinion of the European Union. Responsibility for the information and views expressed lies entirely with the author(s).